

աշխարհն Մարաց, և առ տամբն Մաքրտաց աշխարհին, և առ Ատրպատականաւ: Եւ առաւել ևս քան զայս լինոյր աւետարանաւն Քրիստոսի՝ ծայրէ ի ծայր զամենայն առհասարակ. զորս գնեաց չարչարանօք, առողջացուցեալ զնոսին աստուածաբան լեզուաւն բարեգրապէս զարգարէր: Քանզի ոչ եթէ առանց մեծի խորհրդոյ էին իրք վըշտակիր նեղութեանց նորա. այլ զոր ինչ կրեաց Հայրն մեր պարծանաց, ազգամամ և արդեամբք ընկալաք մէք ի պարգեւացն Աստուծոյ: Բնոն աղին՝ զոր երարձ ի թիկունք նորա համբերող, եւ բարձ ի թիկանց մերոց զբեռինս մեղաց, և համեմաց զանհամութիւնս մեր ազիւն ճշմարտութեան: Գլուխիվայր կախին նորա, ուղղեաց զգնացս մեր ի բարձունս: Զուրն՝ լուաց զաղտ հնութեան մերոյ: Մոխիրն՝ երբ մեզ օծումն ուրախութեան: Քացախն՝ երարձ զկիրս մերոյ տկարութեանս: Տառասկն՝ զփուշ մերոյ խղճմտանացն: Քերանքս՝ զմարմինն ապականագործ: Պապարն՝ զծանրութիւն պարտեացն: Դանգանաւանդն՝ զանանական հնազանդութիւն: Թիւք չորեքտասան չարչարանացն՝ եխեց զաղբիւրս ականիցն՝ որ յայնմ հասակի սկսանին: Եւ արարին զկեանս մեր՝ ամենաճառագայթ՝ որպէս լուսին զջորեքտասան զիշերն իւր: Ախրապին իրք՝ զվիրաւորեալքս և զհօսեալքս յերկնից ի խորս անդերդոց, ի վեր անեալ զմեզ ի յերկինս եհան, որպէս Տէրն զհօգիսն ի զթոխոց: Թիւք հնգեքտասան՝ օրհնեաց զարձակումն և զսկիզբն ծննդեան մերոյ, զի անտի սկսանիմք: Եւ զի երեք հնգեքտասան զգայութիւնս մեր՝ անխնութիւնի և առանց թունից թշնամոյն պարսպեաց բազմաբան վարդապետութեամբն: Ծնաւ ազգս բաղումն աւազանաւն դրոշմեալ, մինչ զի եօթն օր մկրտէր իւրովք ձեռօքն՝ չորք հարիւր ընդ անձինս: Եպիսկոպոս կացուցանէր իւրովք լուսարաշխ աջովն չորք հարիւր ոգիս. և Քահանայս և Սարկաւաղունս և Գպիրս, որոց ոչ գոյ թիւ: Ասան նոցա շինէր անապատս և բնակեցուցանէր, աղքատանոցս և հիւրանոցս պատրաստէր ըստ աշխարհոց՝ գաւառաց՝ գիւղից և ագարակաց, եկեղեցիս հաստատէր ապարանօք պիտոյից, չորս հօղս եկեղեցւոյ ագարակին, և եօթն մեծացն քիչից և աւանից: Գլորոցս յօր-

նէր, մանուկս հաւաքէր, և վարդապետս Յոյն և Ասորի գրոյ և լեզուի գիտակս՝ կացուցանէր: Ռոճիկս կարգէր յարքունուստ. և զուարճացուցանէր զթագաւորն Քրիստոսաւէր յայտոսիկ: Քանզի իսպառաք, զուարճանայր, ցնծայր առաջի զարդուն եկեղեցւոյ, որպէս Գաւթի արքայ առաջի Տապանակին Աստուծոյ: Յետ այսորիկ առանձնանայր, ի լուծեան կայր թաքստեամբ յանապատս և ի զերծս տեղիս: Զի ամենայն աստիճանս Աստուծային շնորհացն յիառաւորեցէ: Առաջինն, որդեգրութեան շնորհի արժանի եղև աւազանաւն: Երկրորդ, էառ զպսակն մարտիրոսաց, Երրորդ, ել ի գահն քահանայութեան: Զորրորդ, ի քահանայապետութեան ամուսնաւ: Հինգերորդ, եհաս մարդարեական պատուոյ: Աւելորդ, բարձրացաւ յԱռաքելական պատիւ: Եօթներորդ, վերացաւ ոսկիապատ թեօք, և յառանձնական վարս՝ յորդորեալ յԱնտօնէ և ի Վրօնիդեայ, զի այնպէ կացցէ, և անգիտելի բնաւից վախճանեցի: Մովսիսաբար, զի մի պաշտեցեն զոսկիրս նորա դեռահաւատ և նորածնունդ որդիք նորա՝ Հայաստանեայք. զոր և արարն իսկ, և բնակեցաւ ի լեառն Սեպուհ, որ և այժմ կոչի սուրբ Գրիգոր:

(Մատթ. 23: 1-10)

ՀԱՅ ԵՐԵՄԵԱՅ

Ա Ն Ո Ւ Ա Ն Ա Վ Ո Չ Ո Ւ Թ Ի Ն,

Հայկա՛ն անձն զնէլ զեդէ՛ է զի Աղբէ՛ք Երեմիայնէն:

Մեր ազգի օտարամոլ սովորութիւնք՝ իբր քաղաքակրթութիւն համարուած է իրան մէջը, վասնզի ինչ ազգի մէջ որ բնակի, կրճանայ նոյն ազգի բոլոր սովորութեանց նմանող լինիլ՝ թէ լեզուով՝ թէ բարբով՝ թէ հագուստով՝ թէ առնելով և թէ որ և իցէ շարժմանց. թէպէտ ներկի է ամեն մի սովորութեանց հետեող լինիլ բայց չի ներուիլ այն բանին, որն որ թէ ազլութեան և թէ կրօնին անպատուութիւն կը բերէ. զորօրինակ՝ երկխաների անուանակոչութեանց մասին. զի փոխանակ սրբոց և նախնի Հայ անուանց՝ մարանալով՝ այլոց ազգաց անուններ

(*) Աւելի զուարճալի կրկիննի մեր ազգային ուսումնասէր երիտասարդներին համար, եթէ ամեն մի

3) Աղնիւ սերունդ զիւցաղնական,

հանելուկը առանձին ~~է~~^է վրայ⁷ էրեն, խաղի
ձգթի ~~է~~^է նախն քաժանեն իրարի վրայ: Եւ ո՛վ
որ հանելուկը լուծէ, ինքն ստանայ նոյն առաջար-
կած հանելուկի թուղթը. եւ հետեւապէս շատ ունի-
ցողը կը շահուի կամ կը տանի. եւ այս կերպով մի
անկնատ խաղ կը լինի իրանց համար եւ միանգա-
մայն զովիկի, եւ օգտակար զուարճութիւն է այս դեր-
դաստանի մէջ:

Սեպուհ տիրող իւր ազգի մէջ

Իւր անուիով քաղաք շինեց՝

Արարատայ մեծ դաշտի մէջ:

(Արամայիս՝ որ շինեց Արմաւիր քաղաքը):

4) Հայրենասէր անպարտե ի,

Եւ հալածող իւր թշնամեաց,

Յաղթեց վանեց, և սպաննեց

Նոցա զօրքի գլխաւորաց:

(Արամ՝ որ սպաննեց երեք պլազգի իշխաններին):

5) Հայոց նախկին պատկաւոր,

Քաջ թագաւոր Հայկազարմից,

Իշխեց ազատ Հայաստանին,

Թագ առնելով Վարդակէտից:

(Պարոյր՝ Հայոց առաջին թագաւորը):

6) Հայոց պարծանք մեծ թագաւոր,

Յաղթող Մարաց թագաւորին,

Թորք հանեց՝ զին տապալեց,

Տէգ խրելով նորա սրտին:

(Տիգրան Ա. որ սպաննեց Աթոհհակին):

7) Հայաստանի բարեկարգիչ,

Հզօր արքայն Պարթևական,

Սանգնիւ՝ եղաւ արիւթ թեամբ,

Արշակունեաց իշխանութեան:

(Վաղարշակ՝ Պարսից Արշակ թագաւորի եղբայրը):

8) Պոնտոս երկրին սարսափ տուող,

Արի յաղթող Արշակունին,

Օձի թիւնով մխած տէգը,

Ուժով խեց կոթող քարին:

(Արշակ Ա. Վաղարշակ թագաւորի որդին):

9) Արշակունեաց արի արքայն,

Նուաճող ազգին քաջ Ալանաց,

Բարեկարգեց զՀայաստան,

Յաղթեց իսպառ իւր թշնամեաց:

(Արտաշէս Բ. թագաւոր Հայոց):

10) Արիասիրտ ահեղարկու,

Հռովմայեցւոց իշխանութեան,

Պոնտոս երկրի մեծ կուսակալ,

Շատ լեզուագէտ առանց թարգման:

(Միհրդատ՝ Տիգրան Բ. թագաւորի փեսայն):

11) Հայոց ազգի վեհ անդրանիկ,

Քրիստոնեայ սուրբ թագաւոր,

Հայաստանի պարծանք եղաւ:

Հզօր արդեամբ հռչակաւոր:

(Արդար՝ Արշամ թագաւորի որդին):

12) Հայոց նախկին լուսաւորիչ,

Սուրբ առաքեալ տեառն Յիսուսին,

Եկաւ ի Հայս և բժշկեց

Հայոց Աբգար թագաւորին:

(Ս. Թադէոս՝ Հայոց առաքեալը):

13) Պարթևական հզօր արքայն,

Որ չարչարեց Լուսաւորչին,

Յետոյ դարձաւ Քրիստոնեայ,

Եւ գործակից եղաւ նորին:

(Տրդատ՝ Խոսրով թագաւորի որդին):

14) Քրիստոսական հաւատոյ լյար,

Հիմնաւորեց ի Հայաստան,

Բազմաչարչար սուրբ Հայրապետ,

Աղնիւ տոհմից Պարթևական:

(Ս. Գրիգոր՝ Լուսաւորչին մեր):

15) Ընտիր հովիւ եկեղեցւոյ,

Արժանաւոր ժառանգ բարի,

Իշխան Հայոց Արդեղայոս,

Սրով նորան կը պատահի:

(Ս. Արիստակէս՝ Լուսաւորչի փոքր որդին):

16) Աղնիւ տոհմի սուրբ շառաիղ,

Մեծ Հայրապետ վարուք բարի,

Լուսաւորչի նախկին որդին,

Եղաւ յաջող Ռատակէտ:

(Ս. Արթանէս՝ Լուսաւորչի մեծ որդին):

17) Սուրբ Հայրապետ եկեղեցւոյ,

Ընտիր հովիւ արժանաւոր,

Որոյ խոտիւ նահատակեց,

Հայոց Տիրան վատ թագաւոր:

(Ս. Յուսիկ՝ Արթանիսի որդին):

18) Աշուան ազգի ընտիր հովիւ,

Սուրբ Նահատակ արթուն անուամբ,

Մանկահասակ Վաթողիկոս,

Ի ի կատարեալ իմաստութեամբ:

(Ս. Գրիգորիս՝ Աշուանից Վաթողիկոսն):

19) Հայաստանի ճրագ լուսատու,

Սուրբ Հովնապետ արժանադու,

Խմեց բաժակ թխնով լցուած,

Թաղաւորի անգութ ձեռքով:

(Ս. Ներսէս՝ Հայրապետն Հայոց):

20) Պարթեական սուրբ Հայրապետ,

Ընդդիմացաւ Հայ իշխանաց,

Որոնք եղան պատճառ անկման,

Իշխանութեան Արշակունեաց:

(Ս. Իսահակ՝ Թարգմանիչ Հայրապետն):

21) Հայոց ազգի մեծ բարերար,

Եղաւ երրորդ Լուսաւորիչ,

Գտաւ ազգին Հայիրէն գիր,

Եւ կոչեցաւ սուրբ Թարգմանիչ:

(Ս. Մեսրոպ Վարդապետն Հայոց):

22) Քրիստոսական սուրբ օրինաց,

Վրէժխնդիր էր բորբոքուած՝

Դէմ՝ կանգնեցաւ ահարկութեամբ՝

Պարսից Մոզուց, և Մոզպետաց:

(Ս. Ղևոնդ Իմաստուն Էրէցն):

23) Պարսից Յազկերտ արքային դէմ,

Ճշմարտութիւն ծածկել չուզեց,

Յիսուս Փրկչի սուրբ յարութիւն,

Եղաւ կերպով նա քարոզեց:

(Գարեգին՝ մանկազոյն նախարար Հայոց):

24) Պարսից անթիւ զօրաց ընդդէմ,

Պատերազմող քաջ զօրավար,

Ճակատամարտ հանդիսի մէջ,

Ընկերներով ՚ի յԱւարայր:

(Ս. Վարդան՝ Սպարապետն Հայոց):

25) Վամսարական ազգի սերունդ,

Հետի կռուէր սուրբ ձեռին,

Երբ խրուեցաւ ձին ազմի մէջ,

Ի Վարդանանց պատերազմին:

(Արշալիր՝ Նիզակակից Վարդանայ):

26) Աւարայրի պատերազմին,

Մեծ Վարդանայ քաջ մարտակից,

Ընծայացի իշխան ընտիր,

Եղաւ մահուան հաղորդակից:

(Արսէն՝ ընկերակից Վարդանայ):

27) Մամիկոնեան քաջ զօրավար,

Ընպարտելի Պարսից զօրաց,

Սակաւաթիւ զօրքով յաղթեց,

Եւ ինքն այնպէս անյաղթ մնաց:

(Վահան Մամիկոնեան՝ Սպարապետ Հայոց):

28) Տարոն երկրի անյաղթ իշխան,

Զարհուրեցոյց Պարսից ազգին,

Նոցա անթիւ զօրաց յաղթեց,

Տիրեց ազատ իւր նահանգին:

(Մուշեղ՝ զօրավար Տարոնոյ):

29) Հռչակաւոր մեծ քաղաքին,

Քաջ թագաւոր և ողորմած,

Միշտ աղքատներ կանչէր իւր հետ,

Սիրակուրի սեղան նստած:

(Աշոտ ողորմած անուն թագաւոր Բագրատունեաց):

30) Բագրատունեաց ընտիր զարմից,

Քաջ թագաւոր սուրբ նահատակ,

Զար ոստիկան Յուսիպ ձեռքով,

Սը չարչարուի բազմատեսակ:

(Սմբատ Խոստովանող Ս. նահատակ թագաւոր):

31) Հայոց չորրորդ իշխանութեան,

Եղաւ կանգնող ազնիւ իշխան,

Հայոց երկրին Սիլիկիոյ,

Տիրեց ազատ համանդամայն:

(Ռուբէն՝ հիմնադիր Ռուբինեանց իշխանութեան):

32) Ռուբինեանց տան վերջին ճրագ,

Թագակորոյս ազնիւ իշխան,

Հալածական մինչ ՚ի Փարիզ,

Գնայ, և անդ՝ առնու վախճան:

(Լևոն՝ վերջին թագաւոր Ռուբինեանց):

ԻԳՆԿԱՆ ԸՆՈՒԱՆՔ:

1) Մեր սուրբ Փրկչի Մայր անարատ,

Արեւելից մեծ արուեսակ,

Ծառ չահարեր՝ ծառ պողատու,

Սանանց սեռին եղաւ պարծանք:

(Ս. Մարիամ Աստուածածին):

2) Ամուլ և ծեր կին պառաւած,

Ծնաւ բերաւ մի սուրբ որդի:

Արժանացաւ կոչուիլ նա մայր,

Վարապետի տեառն Յիսուսի:

(Եղիսարեթ՝ Ս. Յօհանէս Մկրտչի մայրը):

3) Կենաց փայտին ՚ի գիւտ գնաց,

Յերուսաղէմ ի Ս. քաղաք.

Գտաւ հանեց սուրբ գանձն անգին,

Որ հաւատոյ եղաւ պարծանք:

(Հեղինէ Ս. Թագուհին):

4) Աշխարհակուլ ջրհեղեղից,

Երբ աղատուած տապան նստաւ,

Էր ամուսին արգար նոյի,

Եւ ի Մարանդ նա թաղուեցաւ:

(Նոյեմկար՝ կին Նոյ Նահապետի):

5) Հայոց նախկին Լուսաւորչի,

Սուրբ կոյս ընտիր աշկերտուհի,

Իւր հօր ձեռքով անխնայարար,

Ի սէր փրկչին Նահատակի:

(Ս. Սանդուխտ՝ Սանատրուկ թագաւորի աղջիկ):

6) Յարեւելից անգին մի գանձ,

Հայաստանի նուիրեցաւ.

Որով մեր ազգը խաւար կոոց

Պաշտելութեանց ազատեցաւ:

(Ս. Հռիփսիմէ՝ կոյս Նահատակ):

7) Հոգեւոր մայր սուրբ Հռիփսիմեայ,

Եւ մայրապետ սուրբ Վուսանաց,

Նուէր և զո՛հ Հայաստանի,

Արժանացաւ երկնից փառաց:

(Ս. Գայիանէ՝ գլխաւոր կոյս Նահատակ):

8) Սուրբ կոյս ընտիր և ճգնաւոր,

Սեպուհ լեռան յայրս բնակի.

Հատ ժամանակ մնալուց յետ,

Բարի մահուամբ կը վախճանի:

(Ս. Մանի կոյսն, ընկեր Հռիփսիմեանց):

9) Վրաց ազգի լուսաւորիչ,

Կոյս Առաքեալ և Նահատակ,

Ընկեր զոլով Հռիփսիմեանց,

Եւ էր վարուքն մարմնով հրեշտակ:

(Ս. Նունի կոյսն՝ Վրաստանի Առաքե-
լուհին):

10) Սուրբ Վարդանայ կոյս օրիորդ,

Եղաւ Վրաց մեծ թագուհի.

Որոյ Վազգէն իւր ամուսին,

Նահատակեց առանց սուրի:

(Ս. Հուշան կամ Հուշանիկ):

11) Պարթեւազանց անյաղթելի,

Մեծ Տրդատայ ազնիւ տիկին,

Էր բարեպաշտ ջերմ հաւատով:

Հայաստանի մեծ թագուհին:

(Աշխէն՝ կին Տրդատ Թագաւորին):

12) Քաջ Տրդատայ քոյր նազելի,

Արքայազարմ վեհանձնական.

Հայաստանի դիւցազնուհի,

Համեստ վարուք հաճոյական:

(Խոսրովիդուխտ՝ Խոսրով Թագաւորի
աղջիկ):

13) Քաջ Տիգրանայ անձնանուէր,

Հաւատարիմ ճշմարտութեան,

Աժդահակայ դաւադուծիւնը

Գրեց եղբօրն միանգամայն:

(Տիգրանուհի՝ քոյրն Տիգրան Ա. թագա-
ւորի):

14) Տիգրան Հայոց թագաւորի՝

Էր Թագուհի ազնիւ Տիկին.

Որոյ եղաւ հաւատարիմ,

Ժրադուխտ պսակ անգին:

(Զարուհի. կին Տիգրան Ա. Թագաւորի):

15) Ալան ազգի դուստր ճարտար,

Եղաւ Հայոց մեծ Թագուհի.

Տիկին ազնիւ Արշակունեաց՝

Քաջ Արտաշէս թագաւորի:

(Սաթենիկ՝ կին Արտաշէս Բ. թագաւորի):

16) Արշակ երկրորդ թագաւորի՝

Հայաստանի մեծ Թագուհին,

Դուստր չքնաղ իւր Հայրենեաց,

Պայծառ ազնիւ զոհար անգին:

(Փառանձնեմ՝ որ եղաւ կին Արշակայ):

ՄԵՐՈՂ ԲՆՀԱՆԱՅ ՓՈՒԴՆԷՆԵՅ՝

Ի Վ. Ազուլիս: